ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Նվիրվում է Հայաստանում քրիստոնեության ընդունման 1700-ամյակին

ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼՈՒ «ՎԱՐԴԱՆԱՆՑ» ՇԱՐԱԿԱՆԸ

Ա. Գ. ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆ

Ներսես Շնորհալու շարականները բազմիցս գնահատվել են եւ դասվել հայ քրիստոնեական գրականության երեւելի քերթվածների շարքը: Այդ շարականներից մեկը՝ Վարդանանց նվիրվածը, առավել քաջածանոթ է եւ առավել կապված հայ ժողովրդի պատմական ճակատագրին: Եղիշեն «Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին» աշխատությունը շարադրելիս Վարդանի կերպարը հարմարեցրել է սրբախոսական գրականության պահանջներին: Վարդանը հայրենասեր է, նա անթերի է, նա հոգեբանորեն իրեն նախապատրաստել է հանուն հավատի զոհվելու, իր զորքի առաջ խոստովանում է, որ առ ոչինչ ունենալով մահը, կռվելու է հեթանոսների՝ մազդեզականների դեմ եւ գոտեպնդում է իր զինակիցներին ու զորքին, որ հեթանոս եւ մահկանացու մարդու սրի առաջ երկյուղից թիկունք չդարձնեն ու իրենց մղելիք կռիվը համարում է սրբազան. «Մի երկուցեալ զանգիտեսցուք ի բազմութենէ հեթանոսացն, եւ մի յահագին սրոյ առն մահկանացուի զթիկունս դարձուսցուք, զի եթէ տացէ Տէր յաղթութիւն ի ձեռք մեր, սատակեսցուք զօրութիւն նոցա, զի բարձրասցի կողմն ճշմարտութեան, եւ եթէ հասեալ իցե ժամանակ կենաց մերոց սուրբ մահուամբ պատերազմիս, ընկալցուք խնդութեամբ սրտիւ, բայց միայն յարութիւնս քաջութեան վատութիւն մի խառնեսցուք»[1]:

Եղիշեն Ալեքսանդրիայում հրաշալի կրթություն ստացած, դավանաբանական գրականության մեջ հմտացած հոգեւորականը, 5-րդ դարում արդեն Վարդան Մամիկոնյանին ու նրա զինակիցներին իր պատմության մեջ դասում է հայ եկեղեցու սրբերի շարքը:

Ղազար Փարպեցու «Հայոց պատմութեան» մեջ Վարդանի դիմումը իր զորականներին ու զորքին ավելի քան քրիստոնեական բնույթ ունի: Ժամանակը փոքր- ինչ հեռացել է, եւ պատմիչը խոսում է մարտիրոսի մասին, որի դիմումը կառուցված է Ավետարանի վարդապետության կանոնների համաձայն եւ նրանում բացատրվում է, թե որն է մարտիրոսանալու, սրբացվելու ճանապարհը: Վարդանի զինակիցները, արհամարհելով մահը, պիտի գնան Քրիստոսի ընթրիքին եւ ուտեն հրեշտակների հացը. «Գունդ բազում համի վրիպեսցի ոք եւ զղջանայցէ: Եւ եթէ ոք խորհի այլազգ ինչ, որպէս եւ այլքն, որք խոտորեցան զկնի սատանայի դադարեալ հանգիցե ուր եւ թուեսցի հաճոյ ումեք: Քանզի ոչ ոք պսակի ընդ ընկերաց իւրոց թէ ոչ տանջի. այլ իւրաքանչիւր ոք անձին իւրում գանձէ զհողեղէնսս եւ զյաւիտենականսն»[2]:

Այս էր պատմական ավանդույթը՝ հետագա սերունդներին փոխանցված 5-րդ դարի երկու նշանավոր մատենագիրներից: Քրիստոնեական հին գրականության լավագույն գիտակ Դմ. Լիխաչովն իր «Поэтика древнерусской литературы» գրքում նկատում է, թե որքան շատ էին հայտնվում ռուս գրականության մեջ ռուսների պատմությանը, ռուս սրբերի վարքերին, ռուսական կենցաղին վերաբերող գործեր, այնքան ավելի գեղարվեստի մեջ արտացոլվում էր ռուսական իրականությունը[3]:

Եղիշեի ու Ղազար Փարպեցու պատմությունները, Ավարայրի հերոսամարտի իրենց նկարագրով, արտացոլում էին այդ ազգային ընդվզման ոգին, որը պատմական էր՝ քրիստոնեական էությամբ, ազգային էր եւ դավանաբանական: Այս ոգին կենդանի մնաց ու հարատեւեց դարեր, քանզի 5-րդ դարում Վարդանը եւ նրա զինակիցները հայտարարվեցին սրբեր, ու հայոց եկեղեցին գուրգուրանքով իր ծիսարաններում մտցրեց նրանց անունները:

Վարդանանց կերպարներին քրիստոնեական ոգով վերստին անմահացրեց 12-րդ դարի ամենանշանավոր գրողը՝ Ներսես Շնորհալին: Նա բազմակողմանի զարգացած հոգեւորական էր եւ մինչեւ կյանքի վերջը եռանդուն ծեւով մասնակցում էր հայ ժողովրդի քաղաքական ու հոգեւոր կյանքին: Նրա աստվածաբանական խնդիրների մեջ խորամուխ լինելու մակարդակը երեւան է գալիս իր քերթվածներից եւ դավանաբանական խնդիրներով գրված բազմաթիվ նամակներից[4]: Շնորհալին երազում էր հայոց պետականության

1. Եղիշե, Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին, Երեւան, 1989, էջ 204-206:
2. Ղազար Փարպեցի, Հայոց պատմություն, ...Երեւան, 1982, էջ 160:
3. Лихачев Д., Поэтика древнерусской литературы, Москва, 1979, стр. 24.
4. Տե՛ս, Ներսես Շնորհալի, Նամականի, Վենետիկ, 1838:

digitised by A.R.A.R.@

վերականգնումը Մեծ Հայքի տարածքում՝ Վաղարշապատ մայրաքաղաքով: Նա իր կյանքի վերջին տարիներին՝ 1166-1173 թվականներին, կաթողիկոս էր՝ հայ ժողովրդի հոգեւոր առաջնորդը: Նրա նպատակն էր հայոց եկեղեցու դերի բարձրացումը՝ ի շահ հայ ժողովրդի բարեկեցիկ ներկայի եւ երազելի ապագայի. այդ հիանալի երեւում է «Թուղթ ընդհանրական» գործից: Գրիգոր Նարեկացուց հետո ներսես Շնորհալին նոր լիցք հաղորդեց հայ գրական կյանքին՝ վայելելով մեծ հեղինակություն թե՛ կենդանության ժամանակ եւ թե՛ հետագա դարերում:

Շնորհալու ստեղծագործության մեջ մի առանձին հմայք ունեն շարականները եւ նրանցում՝ «Նորահրաշ պսակաւոր» սկսվածքով Վարդանանց նվիրված շարականը: Այս շարականի վերաբերյալ հիացական խոսքեր շատ են ասվել՝ այն ունի «Ներսեսի երգ» գլխակապը: Մանուկ Աբեղյանի կարծիքով՝ Ներսես Շնորհալու բազմաթիվ հոգեւոր երգերը ճոխացրել են հայոց եկեղեցու ժամերգությունը, շատ սիրված եւ ժողովրդականացված են եղել եւ, որպես օրինակ իր եզրակացության, նա վկայակոչում է Վարդանանց շարականը: Շնորհալու ողջ ստեղծագործությանը հատուկ մենագրություն նվիրած Գրիգոր Հակոբյանը նույն շարականի վերաբերյալ գրեթե կրկնում է Մ. Աբեղյանի գնահատականը եւ ավելացնում. «Այն կրել է ազգային, ժողովրդական բնույթ: Հավանաբար այս հանգամանքն էլ պատճառ է դարձել, որ... 17-րդ դարում, որոշ հոգեւոր հայրեր ուզեցել են վերանայել Վարդանանց տոնը եկեղեցում ընդունելու խնդիրը»[1]: Շնորհալու վերոհիշյալ շարականի ծիսական նշանակության մասին Ղեւոնդ Ալիշանը չի խոսել իր «Շնորհալի եւ պարագայ իւր» գործում[2]: Այդ հարցին մանրամասն անդրադարձել է Գաբրիել Ավետիքյանը: Նա տող առ տող գնահատում է շարականը եւ հետո անդրադառնում այն ընդդիմախոսների կարծիքներին, որոնք Վարդանին եւ նրա զինակիցներին չեն համարում եկեղեցու համար զոհված մարտիրոսներ: Ավետիքյանը փորձում է իմաստ տեսնել անգամ Ավարայրի հերոսամարտում ընկած նահատակ իշխանների անունների եւ վարքագծի կապի մեջ: Շարականի յոթերորդ տունը նվիրված է Արսեն Ընծայեցուն.

Ի հոտ անուշ ողջակիզեալ մատուցանէր զինքըն նուէր,
Բանաւոր պատարագաւ, ընծայելով հօր ի յերկինս
Արսէնըն ցանկալի արդարութեամբըն ճոխացեալ,
Իմաստութեամբ պայծառացեալ յեօթնարփեան շնորհաց հոգւոյն[3]:

Արսեն անձնանունը Ավետիքյանը թարգմանում է արագիլ, եւ ըստ նրա՝ Սուրբ գրքում արագիլ թռչունը բնությամբ արդար է համարվում «վասն դարմանելոյն զձերացեալ ծնօղաց»՝ նրա կարծիքով՝ էությամբ այդպիսին էր նաեւ Արսենը: Ութերորդ տան մեջ Ն. Շնորհալին խոսում է Գարեգին Սրվանձտյանի մասին, եւ այս հատվածի առիթով Ավետիքյանը պատմական փոքրիկ ակնարկ է տալիս հայոց այրուձիի գլխավորի մասին, հիշեցնելով, որ նա մարտիրոսների մեջ գերագույնը պետք է լիներ, որովհետեւ Հազկերտի ատյանում դատապարտվում է մահվան, բայց հետո արձակվում է եւ մասնակցում Վարդանանց պատերազմին: Սակայն, քանզի նախարարական բարձրի հերթականությամբ նա ավելի հետ էր, ապա Շնորհալին նրա անունը դնում է վերջում[4]:

Ավետիքյանը բացատրում է, որ 17-րդ դարում գտնվել են մարդիկ, ովքեր, անծանոթ լինելով Ավարայրի հերոսամարտի իրական պատմությանը, կասկածեցին Վարդանանց մարտիրոսության վրա՝ նրանց համարելով սոսկ աշխարհիկ զորականներ ու զինվորներ՝ պատերազմն էլ կոչելով զուտ քաղաքական: Ի պատասխան այս մտայնության՝ Ավետիքյանը շատ նուրբ ծեւով բացատրում է, թե ինչու հայ եկեղեցու կողմից սուրբ հռչակված այս զինվորականները պետք է հավերժ կրեն իրենց լուսապսակը:

Ըստ քրիստոնեական եկեղեցու՝ մարտիրոս կամ վկա են համարվում այն մարդիկ, որոնք կամովին հանուն Քրիստոսի կրում են անմարդկային տանջանքներ եւ սրտի խնդությամբ ընդունում են մահը: Այդպիսի սրբերից են հայ իրականության մեջ Շուշանիկ Վարդենին, Վահան Գողթնացին, Անդրեաս երեցը եւ ուրիշներ: Ի դեպ, հայ եկեղեցու պատմությունից հայտնի է, թե ինչպես Անդրեաս երեցը հենց նահատակվելուց հետո դարձավ հայ եկեղեցու սուրբ նահատակ եւ նրա տոնը մտցվեց «Յայսմավուրքների» մեջ: Անդրեաս երեցի հոգեկան արիությամբ ներշնչված՝ նրան ժամանակակից բանաստեղծ Ներսես Մոկացին գրել է մի ընդարձակ գանձ, որին կցված տաղում անվերապահորեն Անդրեաս երեցին կոչում է հայ եկեղեցու նոր վկա.

Եկայք նորագուարծ մանկունք եկեղեցոյ,
Համածայն առէք զժողովուրդս աստուծոյ:
Խանդակաթ սրտիւ ի յերախան սիրոյ
Յիշատակութեամբ սուրբ վկայիս նորոյ[5]:

Վարդանանց մարտիրոս կոչելու ընդդիմախոսները պնդում են, թե մարտիրոսը նա է, ով մեռնում է

1 Հակոբյան Գր., Ներսես Շնորհալի, Երեւան, 1964, էջ 123-124:
2 Ալիշան Ղ., Շնորհալի եւ պարագայ իւր, Վենետիկ, 1873:
3 Ավետիքյան Գ., Բացատրութիւն շարականաց, Վենետիկ, 1814, էջ 599:
4 Ներսես Շնորհալի, Բանք չափաւ, Վենետիկ, 1830, էջ 304:
5 Ներսես Մոկացի, Բանաստեղծություններ, Երեւան, 1975, էջ 199:

Քրիստոսի նման՝ չի դիմադրում իրեն տանջողներին, մահն ընդունում է անմռունչ: Մինչդեռ Վարդանանք զինված գնացին մարտադաշտ, եւ իրենք մեծ կոտորած կազմակերպեցին: Վարդանանց պսակազերծողները փաստում են, թե այդ դեպքում մարտիրոսների բանակում պետք է արձանագրվեն նաեւ խաչակրաց արշավանքներում զոհված բոլոր զորահրամանատարներն ու զինվորները: Պարզվում է, որ ժամանակին Փոկաս եւ Նիկեփորոս կայսրերը նման խնդրանքով դիմել են հույն եկեղեցու առաջնորդներին, սակայն վերջիններս մերժել են զոհված խաչակիրներին հայտարարել եկեղեցու սրբեր:

Գաբրիել Ավետիքյանը հիշեցնում է, որ խաչակիրներին երբեք չի կարելի համեմատել Վարդանանց հետ. տարբեր էին նրանց նպատակները, եւ բոլորովին չբաղդատվող՝ նրանց վարքագիծը: Պատմությունից հայտնի են խաչակիրների պախարակելի շատ գործեր՝ գավառների նվաճում, երբեմն խառնակ վարքագիծ, անկարգություններ ու անիրավություններ՝ գրված տարածքներում: Ավետիքյանը Վարդանանց մարտիրոս լինելու դատը պաշտպանում է՝ եկեղեցու երեւելի հայրերի մշակած չափանիշները հիմք ընդունելով: Նա վկայակոչում է Թովմա Աքվինացուն, որի կարծիքով, եթե նահատակը սրով պաշտպանում է հասարակությունը թշնամուց, որի նպատակն է Քրիստոսի հավատի կործանումը, եւ այդ պաշտպանը զոհվում է, ապա նա մարտիրոս է: Բացի այդ, չէ որ Վարդանը եւ նրա զինակիցները կարող էին պահպանել իրենց կյանքը, ուրանալ հավատը, տեղափոխվել ուրիշ երկիր, սակայն նրանք հանուն հավատի ընդունեցին մահը:

Ներսես Շնորհալին իր շարականի վերջին՝ 10-րդ տան մեջ, չի մոռանում նշել, որ Վարդանանց նահատակության գնով.

Եկեղեցիք Հայաստանեայց պայծառապէս զարդարեցան,
Ունելով միշտ բարեխօս ըզծըգնութիւն մարտի սոցա:

Բելգիացի նշանավոր հայագետ Ֆելիքս Նեւը իր «Քրիստոնյա Հայաստանը եւ նրա գրականությունը» ստվարածավալ աշխատության մեջ հատուկ գլուխ է նվիրել Ներսես Շնորհալուն: Նրան հայտնի են Վարդանանց մարտիրոսության հետ կապված կարծիքների ամբողջությունը: Նա գնահատում է հայ մատենագիրների կարծիքները եւ Վարդանանց կատարած դերի հարցերում հետեւորդն է Եղիշեի եւ Ներսես Շնորհալու: Ֆ. Նեւը հիացմունքով է խոսում Ներսես Շնորհալի գործչի եւ գրողի մասին՝ վերջինիս որակելով որպես մեծ գրող եւ նշանավոր կաթողիկոս եւ Վարդանանց ու Ղեւոնդյաններին անվանում է հայ եկեղեցու փառքեր[1]:

ДОЛУХАНЯН А. Г. -"Шаракан Вардананц" Нерсеса Шнорали - В статье истолковываются некоторые спорные вопросы, связанные с проблемой мартирологии героев Аварайрского сражения. Этот шаракан- известный стих Нерсеса Шнорали, который входит в число ритуальных произведений армянской церкви. Очень важно патриотическое и художественное значение этого произведения, которое своим духовным богатством обогашает внутренний мир верующего человека.

1 Neve F. L'Arménie chretienne et sa litterature, Louvain, 1886, p. 269.

ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑԻ «ՆԱՎԶԻԿԵ» ՔԵՐԹՎԱԾԸ

Հ. Ն. ԱԴԱՄՅԱՆ

«Նավզիկեն», Եղիշե Չարենցի բնութագրությամբ իր «ամենաչքնաղ» երկն է: «Նավզիկեի» մասին քիչ է գրվել: Գրքային հրատարակությամբ առաջին անգամ, լույս է տեսել բանաստեղծի դստեր՝ Անահիտ Չարենցի կազմած ու 1983 թվականին հրատարակած «Ե. Չարենց, Անտիպ եւ չհավաքված երկեր» ժողովածուում, երկրորդ անգամ՝ 1986-1987 թվականներին հրատարակված Չարենցի քառահատորի երրորդ հատորում (1987թ.):

Գրականագիտության մեջ «Նավզիկեի» մասին առաջին լուրջ խոսքն ասել է Հ. Էդոյանը «Եղիշե Չարենցի պոետիկան» գրքում՝ հենց պոետիկական հատկանիշների բացահայտման դիտանկյունով: Այդ երկի ուշացած տպագրության եւ նրա մասին լռության պատճառները, անտարակույս, կապված են եղել «փակ դռների» գաղտնիքներին առնչվող հարցերի հետ:

«Անտիպ ու չհավաքված երկերի» ծանոթագրություններից հայտնի է դառնում, որ Չարենցն այդ երկը նախածեռնել է դեռ 1935-ին, իսկ հեղինակային տարբերակներից մեկի վերնագրի տակ կա «L»-ին (հավանաբար՝ Լեյլիին) գերհամառոտ ընծայականը: «Նավզիկեի» ժանրի մասին Չարենցը որեւէ տեղ ոչինչ չի ասել: Անահիտ Չարենցն այն դրել է պոեմների շարքը՝ դրա հիմքերն ունենալով, բայց ավելի շատ հիմքեր կան այն եղերերգություն համարելու:

Բավական խառն են այդ երկի տարբերակների, պատառիկների խնդիրները (նույնիսկ հրատարակված տարբերակից անհայտ ծեռքեր «հայտնի» տարիներին էջեր են պոկել): Հրատարակված բնագիրն ունի հետեւյալ ընծայականն ու թվագրությունը՝ «Արփիկին, Իզաբելային իմ ամենաչքնաղ երկը.- Ե. Չար. 1936. 21.9»: Ապա՝ «1 Հին Նավզիկե»:

Երկն ունի չորս մաս: Երկրորդ մասը եւս ունի ընծայական՝ «Կնոջս՝ Արփենիկ Չարենցի հիշատակին»: «Նավզիկեն» սյուժե չունի. էլեգիական խորունկ թախիծով գրված քնարախոհական մենախոսություն է: Նրա՝ «1936. 21.9» թվագրությունն արդեն խորհրդանշում է խորհրդային մտավորականությանը դեպի կառափնարան տանելու իրողությունը: Աքսորներն սկսվել էին 1936-ի մայիսի 16-ից: Առջեւում սահմռկեցուցիչ 1937-ն էր: Արդեն բանտում էին Ա. Բակունցը, Ն. Ստեփանյանը, Գ. Մահարին, Մ. Արմենը, Վ. Թոթովենցը եւ ուրիշներ:

Չարենցի կյանքի լուրջ դրաման սկսվել էր «Գիրք ճանապարհի» լույս տեսնելուց ի վեր: Մինչեւ 1936-ի սեպտեմբերի 21-ը Չարենցը եւս քանիցս ենթարկվել էր դաժան հավատաքննության. երկու անգամ արդեն ստորագրել էին տվել քաղաքից չբացակայելու մասին ծանուցագիրը: «Նավզիկեն» նա ավարտել է տնային կալանքի մեջ՝ ստույգ մահապարտի զգացողությամբ: Մեկուսացված գրողը «հայկական հելիկոնի» վայրէջքի առթիվ «վերեւի» ու «ներքեւի» հակառակորդներին ծաղկող բազմաթիվ տարաժանր ստեղծագործություններ էր գրել եւ, առհասարակ, գրելուց թացի ուրիշ սփոփանք չուներ: Գրչով հերկում էր պատմության ու մշակույթի հեռաստանները, դիմակայության հոգեւոր նեցուկներ որոնում:

Պահի եւ ընդհանրապես 30-ական թվականներին Չարենցի ապրած ողբերգության բնութագիրը ներկայացրել է գրականագետ Հր. Թամրազյանը. «Բոլոր տեսակի մեղադրանքներից ու զրպարտություններից ծանրագույնը հավատաքննությունն է, երբ մարդուն բռնի ուժով դուրս են բերում իր նվիրական գաղափարների, վաստակի ու երազների դեմ... Այս մթնոլորտում Չարենցն օգնության է կանչում իր հարազատներին՝ Խորենացուն, Աբովյանին, Կոմիտասին, Թումանյանին, Հայնեին, որոնելով բախտի նմանություն նրանց հետ»[1]:

Ավելացնենք, որ ընդհանուր մշակութային երեւելիներից բացի՝ արդեն ուդիղ մահվան աչքերի մեջ նայող Չարենցի կյանքում ընդգծված երեւում էր նաեւ կին մտավորականի եւ, առհասարակ, կին նեցուկի բացակայությունը: Կյանքում եւ արվեստում Չարենցը չէր հանդուրժում պաղարյուն էսթետներին. նա ապրել էր բուռն, մինչեւ իսկ՝ աղմկոտ կյանքով. կինն ու գինին, երգն ու վայելքը նրա ստեղծագործությանը ներշնչանք, գույն ու երանգ տվող հիմնական խթաններից էին եղել: Իսկ այժմ, երբ դատապարտված էր մեկուսացման, եւ քչերն էին սիրտ անում հանդիպելու նրան՝ տանը կամ դրսում, Չարենցն առանձնակի զգում էր նաեւ երբեմնի ունեցած ու կորցրած, սրտակից ու կարեկից, ապավեն կին նեցուկի կարիքը:

Եվ պոետի մահատեսիլ խոհերի խորքից հառնում է լուսավոր հին կերպարը, որը բաղդատելի է հունական միֆական հերոսուհուն: Իսկ միֆին դիմելն անսյուժե եղերերգության համար հետեւյալ ներքին սյուժեն է ստեղծել: Հոկտեմբերյան հեղափոխությունը, որի հայ մեծ երգիչն էր Չարենցը, դուրս եկավ, որ նրա համար մի Տրոյական պատերազմ էր: Ինչպես դեպքերի վրա որոշակի ազդեցություն ունեցող Ոդիսեւսը Տրոյական պատերազմից հետո տունդարձին ենթարկվեց մահառիթ նավաբեկության, մնաց Ադամի պես մերկանդամ, ցրտահար ու սովահար, անխուսափելի մահվանը դեմհանդիման, -այդպես էլ Չարենցը, պանծացնելով հեղափոխությունն ու նրա առաջնորդին, ի վերջո դարձավ նրա հետնորդներից հալածված մահապարտ:

Ոդիսական տառապանքների համար Ոդիսեւսին վարձատրելու փոխարեն այդ պատերազմը հրահրող

1 Հր. Թամրազյան. Եղիշե Չարենց, Երեւան, 1981, էջ 450:

digitised by A.R.A.R.@